ԲԱՐՁՐԱՐՎԵՍՏ ԳՈՐԾԵՐԻ ԱՐԱՐԻՉԸ

(Ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Հանրապետության վաստակավոր ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը ստեղծագործական բեղուն ճանապարհ էր անցել, երբ լուսահոգի Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի հրավերով ներգրավվեց Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի կազմում՝ իր բազմաշնորհ ունակություններով ծառայելու Հայ Առաքելական Եկեղեցու լուսավորչահիմն գահին:

Վաստակաշատ ճարտարապետը ծնվել է 1916 թ. հունվարի 1-ին, Սիսիանի շրջանի Մազրա (այժմ՝ Բարձրավան) գյուղում: Ի ծնե գեղասեր, ճկարչական շնորհքով օժտված պատանին իր միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: Փոխադրվելով Երևան, ուսանել է Ալեքսանդր Թամանյանի անվան շինարարական տեխնիկումում, որն ավարտելով 1936 թ., որպես տեխնիկ աշխատել է Երևանի ճարտարապետական արվեստանոցներում:

Մասնագիտության մեջ կատարելագործվելու նպատակով 1938 թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը, որտեղից 1941 թ. զորակոչվել է բանակ: Որպես հրետանային զորամասի գինվոր մասնակցել է տարբեր մարտերի, գերմանա-ֆաշիստական հորդաներից մի քանի քաղաքների ազատագրմանը, հասել Քյոնիգսբերգ քաղաք: Մարտական երկու շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հրետանային զորքերի կապիտանի կոչման արժանացած Բաղդասար Արզումանյանը 1946 թ. զորացրվել է:

Նույն թվականի սեպտեմբերից շարունակում է ուսումը՝ այն ավարտելով 1949 թվականին:

Ուրբ քառասուն տարի (որից 20-ը՝ «Երևանճախագիծ» ինստիտուտում) Բաղդասար Արզումանյանը ապրեց ստեղծագործական ակտիվ կյանքով՝ իր մասնակցությունը բերելով Երևանի, Վանաձորի ու այլ բնակավայրերի կառուցապատման ազգանվեր գործին: Անհատապես և հեղինակային կազմով նա մասնակցել է մի շարք կարևորագույն հասարակական շենքերի ու բնակելի համալիրների նախագծմանը, որոնց իրականացմամբ հարստացրել է նորօրյա հայ ճարտարապետության գանձարանը: Մեծ է ցուցակը իր գործերի, ուստի բավարարվենք դրանցից առավել կարևորների հիշատակմամբ:

Որպես համահեղինակ ճարտարապետ Հովհաննես Մարգարյանի նա մասնակցել է Վանաձոր քաղաքի հասարակական գլխավոր կենտրոնի հոյաշեն ճարտարապետական անսամբլի ստեղծմանը՝ դրանում ներառելով քաղաքային խորհուրդը, «Գուգարք» հյուրանոցը ու բնակելի շենքերը: Իր նախագծերով են կառուցվել Ծաղկաձորի, Հանքավանի և Վանաձորի պիոներական ճամբարները: Ճարտարապետներ Հովհաննես Մարգարյանի և Օմավոն Ազատյանի հետ համատեղ է ստեղծվել Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի խոշորածավալ համալիրի նախագիծը: Իր և Օմավոն Ազատյանի համատեղ նախագծերով են կառուցվել Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված «Էրեբունի» և Սամարղանդի հիմնադրման 2450-ամյակներին նվիրված թանգարանները: Նա հեղինակն է (Արեգ Իսրայելյանի և Սարգիս Ներսիսյանի հեղինակակցությամբ) Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի: Ճարտարապետների մի այլ խումբ գլխավորելով, Բաղդասար Արզումանյանը իրականացրել է «Մոսկվա» կինոթատրոնի հիմնական վերակառուցումը: Ավելի ծանրակշիռ է նրա ներդրումը Երևանի կոնյակի գործարանի ճարտարապետական համալիրի կառուցման մեջ: Իր նախագծով է իրականացվել այդ գործարանի հատնեսի սրահը, իսկ լցման արտադրամասի նոր մասնաշենքի համար ինքը, հեղինակակիցներ Սարգիս Ներսիսյանի և Հասմիկ Ալեքսանյանի հետ, արժանացել է Խորհրդային Միության Գեղարվեստի ակադեմիայի ոսկե մեդալի:

Ճարտարապետական իր պրակտիկ գործունեությունը Բաղդասար Արզումանյանը տասնամյակներ շարունակ զուգակցել է հայկական ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրության հետ՝ դրանց չափագրման միջոցով: Օմավոն Ազատյանի հետ միասին հեղինակ է հարյուրավոր թերթերի հասնող չափագրությունների: Այդ շնորհակալ աշխատանքը միևնույն ժամանակ նպաստել է խորամուխ լինելուն մեր քարակերտ գանձերի կառուցողական և գեղարվեստական հնարանքներում, մոտիկից ծանոթանալուն

ճարտարապետական մանրամասներին ու զարդարվեստի բազմապիսի հորինվածքներին, որի դրական կնիքը նկատելի է նրա հետագա ստեղծագործություններում: Իր երկարատև ու արդյունավետ ճարտարապետական գործունեության համար նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Ոչ լրիվ թվարկմամբ այդպիսի վաստակով է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը ներգրավվել Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի կազմում, որպեսզի իր ծառայությունը մատուցի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի շինարարական-գեղարվեստական ծրագրերի իրագործմանը:

Մայր Աթոռում նրա ճարտարապետական գործերի շարքին են պատկանում Մայրավանքի Վանատուն-հյուրանոցի, Նոր Վեհարանի բակի հարավարևմտյան կողմում կառուցված Ալեք և Մարի Մանուկյանի անվան «Գանձատուն» կոչված հոյաշեն թանգարանը (որի համար արժանացել է բարերարի շնորհակալագրին) շենքերը: Նույն բակում նրա նախագծով են կառուցված «Սփյուռք» հուշակոթողը և մի աղբյուր-հուշարձան: Աղբյուր-հուշարձաններ են կառուցվել նաև Գեղարդավանքի և Արարատյան թեմի առաջնորդարանի բակերում: Իր նախագծով է իրականացված կաթողիկոսական օճիքսե գահը Նոր Վեհարանի գահասրահում, վերակառուցման ընթացքում են գտնվում Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցին ու Հայ դպրության տունը Օշականում:

Լայն ու բազմապիսի ընդգրկում ունեն Բաղդասար Արզումանյանի ստեղծագործական հնարավորությունները: Նրա հեղինակությամբ լույս է տեսել «Հայկական եկեղեցիներ» գիրքը: Նա ոչ միայն ճարտարապետ է ու փորձառու ինժեներ-շինարար, այլև շնորհալի նկարիչ, գրաֆիկ, մանրանկարիչ, նուրբ գծագրիչ, խաչքարերի հորինող, կիրառական արվեստի բազմատեսակ գործերի արարիչ:

Ոչ պակաս հաջողությամբ նա հանդես է եկել որպես գրքերի, կաթողիկոսական կոնդակի, «Էջմիածին» ամսագրի շապիկի, կաթողիկոսական գավազանագլուխների, եկեղեցական հանդերձանքի ու սպասքների, շքանշանների, «Հայկական Այբուբենի», «Ոսկե խաչի», Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Հանրապետության գերբերի ձևավորման, ինչպես նաև բազմապիսի այլ գործերում:

Այս առիթով նպատակահարմար ենք համարում ներկա հոդվածին կցել Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի համար Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի պատվերով նրա կատարած գործերի լիակատար ցուցակը, որպեսզի այն հրատարակմամբ արձանագրվի:

Ավագացած տարիքում ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը շարունակում է ապրել ստեղծագործական ակտիվ կյանքով: Իր նախագծով է կառուցվում Սպիտակի եկեղեցին: Վազգեն Ա-ի անունը կրող Սևանի դպրանոցի

բակում կառուցելու համար նախագծել է եկեղեցի: Ամիսներ առաջ նորընտիր կաթողիկոս Գարեգին Ա-ի գլխավորած խմբում նա մասնակցեց իր նախագծով Օդեսա քաղաքում կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությանը:

Բազմաբեղուն ճարտարապետին ու արվեստի շնորհաշատ վարպետին մաղթենք քաջառողջություն, արևշատություն և ստեղծագործական նվաճումների բազմապատկում:

Ճարտարապետական նախագծման աշխատանքներ

Վանատուն-հյուրանոց Մայր տաճարի հարավային կողմում, «Ղազարապատ» շենքի շարունակության վրա (1968 թ.).
«Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն» (1980 թ.).
«Սփյուռք» հուշարձան-կոթող (1988 թ.).
Աղբյուր-հուշարձան Գեղարդավանքում (1986 թ.).
Եկեղեցի Սպիտակ քաղաքում (1990 թ.).
Խաչքար Փարիզի հայոց եկեղեցու համար (1983 թ.).
Կաթողիկոսական գահ օնիքսից, բազկաթոռներ, արծվագործեր (1960 թ.).
Կաթողիկոսի ընդունարանի ձևավորում (գրասեղան, գրապահարաններ) (1963 թ.).
Հայ դպրության թանգարան Օշականում (1966 թ.).
Ս. Հովհաննես եկեղեցու վերակառուցում Երևան քաղաքում (1974 թ.).
Աղբյուր-հուշարձան Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանի բակում (1993 թ.).
Խաչքար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մուտքի մոտ (1991 թ.).
Տապանաքար Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1980 թ.).
Մեսրոպ Մաշտոցի դամբարանի ձևավորում (1988 թ.).
Վեհարանի գլխավոր դուռ (1978 թ.).
Ս. Մարիանե եկեղեցու ս. սեղան (1962 թ.).
Ս. Կատերինե եկեղեցու ս. սեղանը Սանկտ Պետերբուրգում (1993 թ.).
Նահատակաց հուշարձան Սանկտ Պետերբուրգում (1993 թ.):

Գրաֆիկական, գեղարվեստական և կիրառական արվեստի աշխատանքներ

«Էջմիածին» ամսագրի և «Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ուղերձների» գրքերի ձևավորում.
Եղեռնի 50-ամյակին նվիրված կոնդակի ձևավորում.

Մեսրոպյան Այբուբեն (ոսկուց).

Մեծ խաչ (ոսկուց).

Խորհրդային Հայաստանի գերբ (ոսկուց).

Հայաստանի Հանրապետության գերբ (ոսկուց).

Ս. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտ (ոսկուց՝ զարդարված ադամանդներով).

Բարելյեֆ Տ. Տ. Վազգեն Ա-ի պորտրետով հայրապետության երեսունամյակի առթիվ (հիշատակ Արարատյան թեմից).

Կաթողիկոսական արծիվ-պանակ (ոսկուց).

Կաթողիկոսական պանակներ (ոսկուց և արծաթից).

Կաթողիկոսական լանջախաչ (ոսկուց՝ զարդարված զմրուխտե քարերով).

Թանկագին մեծ խաչեր Մայր Աթոռի, Լոնդոնի Ս. Սարգիս, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատերինե եկեղեցիների համար (արծաթից).

Վարդապետական լանջախաչեր (արծաթից, ոսկուց).

Կաթողիկոսական գավազաններ և ասաներ (ոսկուց).

Մեռոնի սկիհներ (ոսկուց և արծաթից).

Ճրագանոցներ՝ «Գրիգոր Լուսավորիչ», «Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև», «Ներսես Շնորհալի».

Տ. Տ. Վազգեն Ա-ի պատարագի հայրապետական զգեստ (երկու տարբերակով).

Արծվազորգի և գորգի էսքիզներ.

Մաշի սպասքի ձևավորում.

Կաթողիկոսական կնիք.

Հարսանյաց թագեր.

Լանջախաչերի և մատանիների էսքիզներ հայ հոգևորականների համար.

Հայաստանի Հանրապետության զինանշան (ոսկուց և արծաթից).

Գիրք-ալբոմ «Հայկական եկեղեցիներ» (Էջմիածին, 1970 թ.):

Տարբեր պատվերներով նախագծված և կառուցված են

Աղբյուր-հուշարձան Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանի բակում.

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Օդեսա քաղաքում.

Սևանա կղզում և Դվին գյուղում կառուցվելիք եկեղեցիների նախագծեր:

Գրոֆ. Վարազդատ Հարությունյան
Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի նախագահ